

Ժողովուրդ

159
(3009)

16 նոյեմբերի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

Թ. Երևան, Արմավյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՈՐ ՊԱՇՏՈՆՅԱՆ ԱՌԱՋԻՆԸ ԿԼՔԻ ԻՐԱՎԱՊԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՓԱՇԻՆՅԱՆԸ ՈՐՈՇՈՒՄ ՈՒՆԻ



Իշխանության սրածայր սլաքներն ամեն դեպքում ուղղված են դեպի իրավապահ համակարգ: Բանն այն է, որ երեկ՝ նոյեմբերի 15-ին կայացած Կառավարության նիստում, Փաշինյանը, խոսելով իրավապահների աշխատանքի մասին, նշեց, որ դատաիրավական համակարգին իրենք տրամադրել ենք այն ամենը, ինչ պահանջվել է, և այժմ ակնկալում են արդյունքներ: Փաշինյանն ակնարկեց, որ ոչինչ իր սրտով չէ եւ առաջիկայում որոշումներ են լինելու: «Աշխատավարձեր ենք կրկնապատկել, կառույցներ ենք ստեղծել, սարքեր-սարքավորումներ ենք առել, ավտոմեքենաներ ենք առել, օրենքներ ենք փոխել... Էլի բացատրություններ... 3իմա մեզ պետք են արդյունքներ, հարգելի՛ գործընկերներ: 7 տարի է դատավարությունը եք անում: Էստեղ ամենամեծ պրոբլեմը ուրիշ բան ա. ամենամեծ պրոբլեմն էն ա, որ մարդիկ չեն հավատում, որ էդ բոլոր բեմականացումների սցենարների տակ ես չեմ ստորագրել: Իմ ամենամեծ պրոբլեմը այդտեղ է»: Նիկոլ Փաշինյանը ակնհայտորեն բարկացած է թիմի ներսում տիրող քաոսից և միմյանց նկատմամբ ոչ թմային պահվածքից: Երեկ էլ ուժայիններից սկսեց դժգոհել. իրավապահ համակարգը տեղում չէ: Փաշինյանը Կառավարության նիստում նշեց նաեւ. «Ես կարող եմ համբերել. մի տարի համբերեմ, 2 տարի համբերեմ, 3 տարի համբերեմ, 4 տարի համբերեմ, հարգելի՛ գործընկերներ, դատական, իրավական, ուժային համակարգի հարգելի՛ ներկայացուցիչներ, իմ համբերության բաժակը լցվել է: Ես ձեզ բոլորիդ ուղիղ ասում եմ սրա վերջը եկել է: Սա չի կարող շարունակվել, հասկանում եք, չի կարող շարունակվել: Ես այլեւս կայացնելու եմ որոշումներ: Ես չեմ միջամտել ոչ մի բանի, չեմ մտել որեւէ մեկի գործի մեջ: Ես որ գյուղ գնամ՝ նույն բաներից են խոսում որ ես մեկից բոլորը են ժամանակ վախենում էին, հիմա էլ են վախենում: Նրանք, ովքեր մյուսներին վերելից էին նայում, նրանք էլի անում են, ու ստացվում է՝ 3այաստանում թույլ իշխանություն է: Կներեք, ուրեմն թույլ ուժային կառույցներն են: Ես թույլ չեմ տա, որ որեւէ մեկը ինձ «թույլ» անվանի»: Ըստ էության՝ այս խոսքերի տողատակերում ազդակներ էին, որոնք ուղղված էին քննչական կոմիտեին, Բարձրագույն դատական խորհրդին, ներքին գործերի նախարարությանը, Դատախազությանը և հակակոռուպցիոն կոմիտեին:


Իրավապահ համակարգի նկատմամբ դժգոհությունն այնքան շատ էր, որ, ըստ էության, մինչև տարեվերջ ազատումներ են սպասվելու հենց այս ոլորտներում: Սա, կարծես, վերջին շանս էր ուժային կառույցներին, որ սթափվեն:

Նիկոլ Փաշինյանը, խոսքն ամփոփելով և գրեթե բղավելով՝ հիշեցրեց հեղափոխությունից ի վեր ասացվածը դարձած արտահայտությունը՝ «Ո՛նց կարա պետության մեջ, ընդհանրապես, որեւէ մեկը ես երկրում թարտա»:

Այս հայտարարությունից հետո դատարանը անակնկալ կերպով որոշեց բերման ենթարկել 33 երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին, «3այաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանին, ԶՈՒ գլխավոր շտաբի նախկին պետ Յուրի Խաչատուրովին:

Նաեւ Սամվել Բալասանյանի որդին տնային կալանքից դեպի կալանավայր գնաց՝ Գյումրու ընտրություննրին ընդառաջ:

Գյումրիում թե՛ն դեռ ընտրությունների օր անգամ նշանակված չէ, բայց քաղաքապետի թեկնածուների պակաս չկա: Այսպիսով՝ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Գյումրու համայնքապետի ընտրություններին մտադիր է իր թեկնածությունն առաջադրել վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Զարուբանյանի ընկերը՝ Գյումրու Տնտեսագիտական համալսարանի ռեկտոր դարձած Կարեն Պետրոսյանը: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Կարեն Պետրոսյանը հաստատեց՝ մտադիր է իր թեկնածությունն առաջադրել գալիք ընտրություններում. «Ընտրությունների հարցում, կարծես, հստակություն չկա, օր նշանակված չէ, բայց ես բազմիցս ասել եմ, որ թե՛ն հանրային պահանջ լինի, մեկը դիտարկում ենք ընտրություններին մասնակցելու հնարավորությունը»: Ինչ վերաբերում է Արայիկ Զարուբանյանի հետ մտերմությանը՝ Կարեն Պետրոսյանն ասաց. «Ես պարոն Զարուբանյանին ճանաչել եմ մինչև հեղափոխությունը, իր հանդեպ ունեցել եմ և ունեմ հարգանք: Ես բոլոր կուսակցություններում ունեմ ընկերներ, ինձ համար քաղաքական հայացքները չեն կարող խոչընդոտ լինել՝ մարդու հետ ընկերություն անելու: Արայիկ Զարուբանյանի հետ ունեմ կառուցողական հարաբերություններ, ինչը չի փոխվել. հաճախակի շփում չունեմ նրա հետ, բայց այն հարաբերությունները, որոնք ունեցել ենք, չեն փոխվել»: Կարեն Պետրոսյանից հետո քաղաքապետի պաշտոնը զբաղեցրել է մասնակցելու ընտրություններին, արդյոք դաշինքի տարբերակը քննարկում են: «Մենք դիտարկում ենք նաեւ դաշինքի տարբերակը, քննարկում ենք կան, երբ արդեն մասնակցության հարցը որոշվի, մյուս հարցերն էլ, ըստ այդմ, կհստակեցվեն, դեռ այդ մասին չեմ կարող խոսել, բայց մասնակցելու դեպքում խրախուսում ենք դաշինքի տարբերակը, քանի որ Գյումրիում մեր արժեքային տիրույթում շատ գործընկերներ ունեմ»: Արայիկ Զարուբանյանի ընկերը, սակայն, ՔՊԻ-ի հետ դաշինքի տարբերակը չի դիտարկում. «Մեր օրակարգում դա չկա, ՔՊԻ-ի հետ դաշինքի հնարավորություն չի քննարկվում», - ասաց նա: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Գյումրու ընտրություններին մտադիր է թեկնածու առաջադրել նաեւ Արամ Սարգսյանի «3անրապետություն» կուսակցությունը: Մեզ հետ զրույցում կուսակցության անդամ Անի Խաչատուրյանը նշեց, որ երբ ընտրության օրը հստակեցվի, այդ ժամանակ էլ կհայտնեն իրենց որոշման մասին»: Ինչպես գիտենք, Գյումրու նախկին քաղաքապետ Վարդան Դուկասյանը նույնպես մտադիր է մասնակցել ընտրություններին: Ընդդիմադիր ուժերը դեռ չեն կողմնորոշվել կուսակցության թե՛ն ոչ:



Ազգային ժողովի աշխատակազմը, կարծես, փորձում է կոնկրետ Ալեն Սիմոնյանի խուլիգանական պահվածքի արձանագրումը: 3իշեց, թե որ դեպքի մասին է խոսքը: Աժ նախագահ Ալեն Սիմոնյանը հոկտեմբերի 31-ին 33 Ազգային ժողովում հերթական անգամ խուլիգանական պահվածքով էր աչքի ընկել: Նա հայիոյաններ էր հնչեցրել, փողոցային բառապաշար գործածել, որը լսելի էր եղել միջանցքներում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացել էր, որ Աժ «3այաստան» խմբակցության սենյակների հատվածում դեպի ճաշարան տանող միջանցքում, աղվախարույց միջադեպ է տեղի ունեցել MediaHub.am կայքի լրագրող Վահե Մակարյանի և Աժ նախագահ Ալեն Սիմոնյանի միջև: 3նչե էին փոխադարձ հայիոյաններ, որոնք լսվել էին ողջ խորհրդարանում: Իրավիճակն այնքան էր թե՛նացել, որ թիկնագործը շրջող Աժ նախագահի անվտանգության աշխատակիցները, «ավանդույթի համաձայն», բռնել էին լրագրող Վահե Մակարյանի ձեռքերը, հավանաբար, որպեսզի Սիմոնյանը հարվածի կամ թքի նրա վրա: Բայց, բարեխիտաբար, այս անգամ Ալեն Սիմոնյանը չէր թքել, և նույնիսկ չէր հարվածել, այլ միայն բղավել էր, հայիոյել և փողոցային վարքագիծ դրսևորել: «Ժողովուրդ» օրաթերթը հարցումով դիմել էր պետական պահպանության ծառայության և խնդրել տրամադրել անվտանգության տեսախցիկների տեսագրությունն ու ձայնագրությունը: Ի պատասխան՝ «Ժողովուրդ» օրաթերթին ՊՊԾ-ից հայտնեցին, որ տեսախցիկների պատասխանատուն Ազգային ժողովի աշխատակազմն է: Դիմեցինք Աժ աշխատակազմ: Ինչպես ես սպասվում էր՝ աշխույժ Դավիթ Առաքելյանը չտրամադրեց իր ղեկավարի խուլիգանական վարքը արձանագրած տեսախցիկների ռի՛ կարդրել, ռի՛ ձայնագրությունը: «33 Աժ «3այաստան» խմբակցության հարակից հատվածում դեպի ճաշարան տանող միջանցքի մոտ, տեսախցիկներ առկա չեն», - ասված է պատասխանում: Կարճ եւ կոնկրետ:

«Ժողովուրդ» օրաթերթը բաց աղբյուրներից տեղեկացավ, որ պաշտոնապես հաստատվել է իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից միլիոնավոր դրամների «ջթույլատրված նվիրատվություններ» ստանալու փաստը: Նախօրեին կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը վարչական վարույթի շրջանակներում պարզել է, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը բազմաթիվ ՍՊԸ-ներից, անանուն նվիրատուներից և ֆիզանձերից օրենքի խախտումներով ստացել է գումարներ, իսկ հետագայում դրանք սահմանված կարգով չի փոխանցել հետ նվիրատուներին կամ վերադարձրել բյուջե: Տարակուսելի է նաեւ այն փաստը, որ հարցի պատասխանող, ՔՊ կուսակցության պաշտոնատար անձ լիազորված Արուսյակ Մանավազյանը նույնիսկ չի մասնակցել ԿԿԻ հանձնաժողովի սույն գործի քննությանը: Նա առաջարկել է նիստն անցկացնել առանց իր ներկայության: Արդյունքում հանձնաժողովը արձանագրել է իշխող կուսակցության կողմից 33 սահմանադրության, մի շարք օրենքների խախտման փաստը (տե՛ն փաստաթղթերը) իսկ Աժ ՔՊ պատգամավոր Մանավազյանին էլ ենթարկել է վարչական տույժի:



ԶՐՈՒՅՑ

ՔՊ-Ն ԻՐԵՆ Է ՎԵՐԱԳՐՈՒՄ ՄԱՐՈՒԹՅԱՆԻ ՁԵՌՔԻԵՐՈՒՄՆԵՐԸ

Երևանի նախկին քաղաքապետ Հայկ Մարուքյանը ArmLur.am-ի հետ զրույցում խոսել է սրանադրոշի քանկացման, իր նախաձեռնած usnraգրահավաքի եւ իրեն ուղղված մեղադրանքների մասին:

-Մենք կողմ ենք, որպեսզի արդեն իսկ ստեղծված սակագները եւ փաթեթները մնան: Դա պետք է շրջանառության մեջ մտնի, քանի որ ամբողջ ամշխարհում ընդունված բարեփոխում է: Երկու տարի առաջ դրա վերաբերյալ արդեն իսկ ամեն ինչ պատրաստ էր, բայց, չգիտես ինչու, հետաձգվեց: Այս ամենին պարզապես պետք է ավելանա նոր կետ՝ «1 ուղեւորությունը՝ 100 դրամ», որպեսզի այն քաղաքացիները, ովքեր չեն տեղավորվում առկա փաթեթների մեջ, ֆինանսապես դժվար է իրենց, կամ ամսվա սկզբին այդքան գումար չունեն, կարողանան հեշտությունը երթեւեկել:

-Պարոն Մարուքյան, իշխանությունները շատ են քննարկում Ձեր նախաձեռնությունը եւ մեկնաբանում են, որ սա հերթական պոպուլիզմն է, քանի որ հենց Ձեր օրոք են անսարք «Գազելներ» ձեռք բերվել, եւ հիմա փորձում են հին, ոչ պիտանի տրանսպորտային համակարգից ազատվել:

-Տարօրինակ ու զվարճալի պնդում է դա, եթե ասել են, որովհետեւ երբ քաղաքապետ էի, մեր թիմի հետ հենց այդ ժամանակ ենք Հայաստան բերել են 6.6 մետրանոց, եւ 8.8 մետրանոց ավտոբուսները: 12 մետրանոց ավտոբուսների պայմանագրերն այդ ժամանակ են կնքվել: Հետագայում այն է, որ այդ ընթացքում ՔՊ-



ականները դեմ էին 8.6 մետրանոց ավտոբուսներին, իսկ 6.6 մետրանոց երթուղայիններին կողմ էին, սակայն, չգիտես ինչու, այսօր դժգոհում են հենց 6.6 մետրանոց ավտոբուսներից: Դեմ էին նաեւ 8.8 մետրանոց Zhongtong-ներին, մենք դժվարությամբ, այլ ֆրակցիաների միջոցով էինք ՔՊ-ին համոզում, որ կողմ քվեարկեն, եւ այսօրվա իրենց հնչեցրած տեսակետը ծիծաղելի է պարզապես:

-Այսինքն՝ դժգոհ էին Ձեր աշխատանքից, դա էր պատճառը:

-Ոչ, աշխատանքից գոհ էին, իրենց «խնդիրը» ավտոբուսներն էին, դրանց էին դեմ: Հետագայում, իհարկե, աշխատանքից էլ էին դժգոհ, որովհետեւ իրենց ցանկություննով ու շահերով չէի առաջնորդվում: Բայց հուսամ, որ ժողովուրդը գոհ էր այդ ժամանակ իրականացված բարեփոխումներից:

Պոպուլիզմի մասին էլ միայն կասեմ, որ այն մարդիկ են շահարկում պոպուլիզմ ասվածը, ովքեր միայն խոսում են եւ ոչ մի գործ չեն անում:

Հրույզեց ՔՊ-ի ՄՍԻՆԱ ՍՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

20 ՆԱԽԱԳԾԻՑ 20-Ն ԷԼ ՉՋԵԿՈՒՑՎՈՂ Է

Հաջորդ շաբաթ՝ նոյեմբերի 19-ին, Երեւանի ավագանին հերթական նիստն է գումարելու:

Օրակարգում 20 հարց է, «ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ ավագանու նիստի օրակարգում ընդգրկված բոլոր հարցերը չզեկուցվող են: Փաստացի, ավագանին շարունակում է իր արատավոր գործելոճը՝ օրակարգային հարցերն առանց զեկուցելու հաստատելով:

Ի թիվս այլ հարցերի՝ օրակարգում նաեւ տրանսպորտի նոր սակագների զեղչման նախագիծն է:

Ավելի վաղ, մենք գրել էինք, որ դժգոհությունների ալիքի ֆոնին՝ քաղաքային իշխանությունները որոշել են զիջումների գնալ:

Հունվարի 1-ից կգործարկվի հանրային տրանսպորտի միասնական տոմսային համակարգի նոր սակագները. գալիք տարում 1 օրվա ուղեւորները կարժենա 880 դրամ, 7 օրվա փաթեթը՝ 4800 դրամ, 30 օրվանը՝ 8800 դրամ, 90 օրվանը՝ 23.600 դրամ, իսկ 1 տարվանը՝ 88.800 դրամ:

Ըստ որոշման՝ 1 եւ 7 օրվա ուղեւորների դեպքում երթեւեկության քանակը կլինի սահմանափակ՝ համապատասխանաբար 8 եւ 30 անգամ, մյուս փաթեթների դեպքում՝ անսահմանափակ:

Տեղեկացնենք նաեւ, որ նշված արժեքները գործում են բացառապես օնլայն տարբերակով ուղեւորն զեկուցելու դեպքում, իսկ ֆիզիկական տոմս զեկուցելու դեպքում դրանք ավելի թանկ են՝ համապատասխանաբար՝ 900, 5000, 9000, 24.000 եւ 90.000 դրամ: Կգործեն նաեւ 90 րոպեանոց ուղեւորները՝ 280 եւ 300 դրամ արժեքով:

Ավագանու ընդդիմադիր խմբակցությունները դուրս են եկել փողոց, պնդում են՝ առաջարկված փաթեթները խելագարության կանխավարկածից են, տրանսպորտը 100 դրամից ավելի չի կարող լինել եւ պահանջում են չեղարկել որոշումը:

Նախկին քաղաքապետ Հայկ Մարուքյանը եւ Անդրանիկ Թեւանյանը արդեն քանի օր է՝ ստորագրահավաք են իրականացնում, որպեսզի դրանք ներկայացնեն ավագանուն եւ պահանջեն նախագիծը չեղարկել:

Դժգոհությունների ֆոնին՝ ավագանու ՔՊ խմբակցությունը զիջումների է որոշել գնալ:

Ավագանու հաջորդ նիստին, որը նոյեմբերի 19-ին է նախատեսված, նոր նախագիծ է ներկայացվելու՝ զեղչեր են սահմանվելու թշակառուների, դպրոցականների, ուսանողների, հաշմանդամության խնդիր ունեցող քաղաքացիների համար:

ՀԵՌԱՄՈՍԱԶՐՈՒՅՑ Է ՈՒՆԵՑԵԼ ԻՐԱՆԻ ԱԳՆԱԲԱՐԻ ՀԵՏ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարար Սեյեդ Աբբաս Արաջիի հետ:

Այս մասին տեղեկացնում են ՀՀ ԱԳՆ-ից:

Զրուցակիցները քննարկել են երկկողմ օրակարգի եւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր: Անդրադարձ է կատարվել առաջիկա միջոցառումներին:

ՊՈՒՏԻՆԸ ՀԵՌԱՄՈՍԱԶՐՈՒՅՑ Է ՈՒՆԵՑԵԼ ԱԼԻԵՎԻ ՀԵՏ

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը հեռախոսազրույց է ունեցել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ, հայտնում է Կրեմլը:

Ղեկավարները հեռախոսով քննարկել են արդյունաբերական համագործակցության եւ տրանսպորտի ոլորտում մի շարք փոխշահավետ նախագծերի գործնական իրականացումը:

Նախագահները հաստատել են նաեւ իրենց փոխադարձ հետաքրքրությունը Մոսկվայի եւ Բաքվի միջեւ ռազմավարական գործընկերության եւ դաշինքի հետագա զարգացման հարցում:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՉԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ

Ադրբեջանի ԱԳՆ մամուլի ծառայության ղեկավար Այխան Հաջիգադեյն պատասխանել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին: Նա նշել է, թե Ադրբեջանի սահմանադրությունը, իբր, «տարածքային պահանջներ չի պարունակում Հայաստանի նկատմամբ»:

Ադրբեջանից նշել են, թե ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, իբր, «փորձում է մոլորության մեջ ագցել միջազգային հանրությանը»:



ԼՈՒՄԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՄԱՆԴԱՏԸ ՏՐԱՄԱԳՐՎԵԼ Է ԱՐԵԳ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից տեղեկացավ, որ նոյեմբերի 12-ին ստացել է Երեւանի քաղաքապետի արձանագրությունն առ այն, որ Երեւանի ավագանու անդամ Լուսինե Գեւորգյանի լիազորությունները վաղաժամկետ դադարել են:

ԿԸՀ-ն նոյեմբերի 15-ի արտահերթ նիստում Երեւանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակից ընտրված եւ լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրամադրել է վերոնշյալ ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Արեգ Գևուրու Գեւորգյանին:

Հանձնաժողովը մեկ այլ որոշմամբ համալրել է Կոտայքի մարզի Աբովյան քաղաքն ընդգրկող թիվ 29 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի թափուր տեղը: Թափուր տեղի համար դիմել է 5 քաղաքացի:

ԿԸՀ-ն նախապատվության քվեակարգով ընտրել է Անի Խաչատուրի Դավթյանին որպես թիվ 29 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամ:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովը մեկնաբանել է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ միջեւ տարեկան խաղաղության պայմանագրի ստորագրման հնարավորությունը, նշել՝ հստակ պայմանավորվածություն դեռեւս չկա:

Բայրամովի խոսքով՝ բանակցային գործընթացի կարեւոր բաղադրիչներից մեկը դեմ առ դեմ շփումներն են, սակայն ներկայումս ադրբեջանական կողմը կենտրոնացած է COP29-ի վրա:

«Այդ պատճառով հանդիպումների անցկացումը միջեւ ղեկավարներ հնարավոր չէ: Դեկտեմբերը կամ հունվարը այլ հարց է: Այս կապակցությամբ հստակ պայմանավորվածություն դեռ չկա: Միեւնույն ժամանակ փաստաթղթի շուրջ աշխատանքները շարունակվում են», - ասել է Ադրբեջանի ԱԳ նախարարը:

Նա անդրադարձել է նաեւ տրանսպորտային հաղորդակցությունների ապաշրջափակման հարցին, նշել՝ այդ ուղղությամբ դեռ բաց հարցեր կան: Բայրամովի խոսքով՝ Ադրբեջանի տարածքում արդեն երկար ժամանակ է, ինչ արագ տեմպերով աշխատանքներ են տարվում տրանսպորտային ենթակառուցվածքի ստեղծման ուղղությամբ, որն առաջիկայում կհասցվի Հայաստանի հետ սահմանին:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՎԱՅԵ ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆԴՐԱԴՐՁՈՑ

«ԵՐԵՒ ՄԵԿ ՀՈՐԻ ԱՄԵՐ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹՈՒՐԿԻԱՅԻ ՄԱՍ Է, ԵՎ ՎԵՐՁ», ՆՐԱՆՔ ԿՐԿՆԵԼՈՒ ԷՐԻ»

4,1 ՄԻԼԻԱՐԴ ԵՎՐՈ՝ ԿԻԵՎԻՆ

Եվրահանձնաժողովը հաստատել է Ուկրաինայի համար մոտավորապես 4,1 միլիարդ եվրոյի երկրորդ կանոնավոր հատկացումը...

«Հանձնաժողովի այսօրվա դրական գնահատականը Ուկրաինայի 4,1 միլիարդ եվրոյի դիմումին եւս վկայում է թե՛ Ուկրաինայի հանդեպ Եվրոպայի անսասան հանձնառության, թե՛ դեպի ԵՄ շարժվելու համար կարևոր բարեփոխումների իրականացման գործում երկրի տպավորիչ առաջընթացի մասին»,- ասել է ԵՅ նախագահ Ուրսուլա ֆոն Դեր Լայենը:

Եվրահանձնաժողովը կոմյունիկեի մեջ ասվում է, որ հոկտեմբերին երկրորդ տրանշի վերաբերյալ Կիևի դիմումի գնահատման արդյունքում ԵՅ-ն եզրակացրել է, որ «Ուկրաինան բավարար կերպով կատարել է այս վճարման համար համաձայնեցված ինը բարեփոխումների ցուցակի շնորհիվ»:

Այս բարեփոխումները, մասնավորապես, ընդգրկում են այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են կոռուպցիայի դեմ պայքարը, բիզնես միջավայրը, աշխատաշուկան, տարածաշրջանային քաղաքականությունը, էներգետիկ շուկան եւ շրջակա միջավայրի պահպանությունը, հիշեցրել է Բրյուսելը:

«Եվրամիության խորհրդի կողմից հաստատվելուց հետո այս որոշումը 2024 թվականին Ուկրաինայի համար ծրագրին աջակցելու համար հատկացված միջոցների ընդհանուր գումարը կավելացնի մինչև 16,1 միլիարդ եվրո», ասվում է կոմյունիկեի մեջ:

Միջոցների փոխանցումը Կիև տեղի կունենա ԵՅ-ի առաջարկով ԵՄ խորհրդի որոշումից եւ Եվրահանձնաժողովի կողմից վճարման մասին որոշման ընդունումից հետո, նշվում է փաստաթղթում:

ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լատվիայում ավարտվել են ՆԱՏՕ-ի առաջին լայնածավալ բազմազգ բրիգադային «Վճռական մարտիկ» (Resolute Warrior) զորավարժությունները:

Կանադայի գլխավորած ՆԱՏՕ-ի բրիգադն այժմ միավորում է ուժեր Ալբանիայից, Չեխիայից, Դանիայից, Իսլանդիայից, Իտալիայից, Չեռնոգորիայից, Յուսիսային Մակեդոնիայից, Լեհաստանից, Սլովակիայից, Սլովենիայից եւ Իսպանիայից: Ավելակվում է, որ ստորաբաժանումը լիարժեք մարտական պատրաստության կհասնի 2026 թվականին:

2022 թվականին Մադրիդում կայացած ՆԱՏՕ-ի գագաթնաժողովում Կանադայի եւ Լատվիայի պաշտպանության նախարարները ստորագրել են ՆԱՏՕ-ի արեւելյան թեւի պաշտպանությունն ուժեղացնելու համատեղ հռչակագիր:

Անցած վարժությունները ուղղված էին հաղորդակցման կարողությունների ամրապնդմանը:

Զորավարժությունների վերջին օրը ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Մարկ Դյուտեն ժամանել է Լատվիա, նա հանդիպել է Լատվիայի նախագահի եւ վարչապետի հետ, այցելել է Ադամի ռազմարագա:

Եթե ուզում եմք հասկանալ, թե ինչ կատարվեց երեկ ԱԾ-ում, ապա դեմք է մեզ նայել կողմից: Այլ երկրների համար՝ հարեւան, բարեկամ, թե՛ հարեւան, սա անելիքը չիմացող ղեկավարներին է: Պետություն, որ չի կարողանում գտնել դասերը իր վերականգնման թուղթերում, չունի վերականգնման կոնցեպտ: Պետություն, որը մոլորակ չի դասկերպում, թե իր գլխին ինչ է գալու առաջիկայում: Այս մասին ֆեյսբուքյան իր էջում գրել է «Այլընտրանքային նախագծեր» խմբի անդամ Վահե Հովհաննիսյանը:

Սա ՄԵԿ հոգու ողբերգությունը չէ, սա մեր բոլորի ողբերգությունն է: Նաեւ այն իմաստով, որ թույլ ենք տվել իշխանության 6-րդ տարում նման տեքստեր լսել: ՄԵԿ հոգու հետ ամեն ինչ պարզ է, պարզ է նաեւ նրա խմբի հետ, եւ եթե երեկ ՄԵԿ հոգին ասեր՝ «Հայաստանը Թուրքիայի մաս է, եւ վերջ», նրանք կրկնելու էին:

Բայց մյուս հարցն ավելի մտահոգիչ է. ո՞վ ենք մենք, ո՞րն է մյուս Հայաստանը: Ողբերգությանը դատարկությամբ հնարավոր չէ հարթել: Հա լավ, ծիծաղեցինք, սրամտեցինք, կատաղեցինք, պատասխանեցինք... հետո՞ ինչ: Այս ընթացքը կարող է վերջանալ ուղղակի նոր ողբերգությամբ:

Հայաստանն ունի շատ կոնկրետ ու շատ սուր հարցեր, որոնք շատ կոնկրետ ու գուցե կտրուկ լուծումներ են պահանջում:

ՕՐՎԱԿ ԽՃԱՆԿԱՐ

ՄԻՊ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ ԿՏԵՂԱՓՈՒՎԻ ՄՈՍԿՈՎՅԱՆ 5

Կառավարությունն իր այսօրվա՝ նոյեմբերի 5-ի նիստում որոշեց Երեւանի Մուկոյան 5 հասցեում գտնվող անշարժ գույքը հետ վերցնել ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեից եւ ամրացնել ՀՀ ՄԻՊ-ի աշխատակազմին:

Հիմնավորման մեջ նշվում է, որ ՀՀ ՄԻՊ-ը գրույթային դիմել է ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե՝ ՀՀ... մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի բնականոն գործունեության համար միջազգային չափանիշներին համապատասխան շենքային պայմանների ապահովման խնդիրը լուծելու խնդրանքով:

Մարդու իրավունքների պաշտպանը նշել է, որ գործող վարչական շենքում աշխատատեղերի մակերեսները բավարար չեն աշխատանքային պայմանների ապահովման համար (օրինակ՝ 24 մ2 տարածք ունեցող աշխատատեղակում աշխատում է 5 մարդ):

Պաշտպանի աշխատակազմի հաստիքների ընդհանուր թիվը 98 է: Պուշկինի 56ա հասցեում գտնվող վարչական շենքում ներկայում փաստացի կա 70 աշխատող, իսկ 18 հաստիք դեռեւս թափուր է, եւ առկա է համալրման անհրաժեշտություն: Մինչդեռ, Աշխատակազմի վարչական շենքում առկա աշխատատեղերն արդեն իսկ բավարար չեն համալրման գործընթացն ապահովելու տեսանկյունից:

Առաջարկվել է քննարկել քաղաք Երեւանի Մուկոյան 5 հասցեում (Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնի հարեւանությամբ) գտնվող քառահարկ վարչական շենքը, իսկ այդ շենքը ՄԻՊ-ի աշխատակազմին ամրացնելու դեպքում:



Յուսումով ու հայիցելով ոչ մի հարց չի լուծվելու, մենք այդպես ամբողջ հանրային դաշտը դնում ենք նույն տիկտոկյան բովանդակության մեջ, որով այսօր կառավարվում է Հայաստանը:

Դրա դեմ պետք է դրվեն մեր առջեւ ծառայած ծանրագույն հարցերի լուծման առաջարկները՝ ծանրակշիռ, հաշվարկված, խելամիտ: Մի տիկտոկյան ֆարսին մյուսը հակադրելով ո՞ր ենք հասնելու:

Լուրջ քաղաքական-հանրային միավորների ստեղծումն ամենակարևոր ու հրատապ գործն է:

Նոր, հասուն միավորներ, որոնք այսօրվա Հայաստանին եւ հայ ժողովրդին՝ իր այսօրվա խնդիրներով, առաջարկելու բան կունենան, առաջնորդելու հասունություն կունենան: Ներքին հաշտություն եւ հավաքական սոլիդարություն կբերեն:

Մնացածը դիտորդական ֆունկցիա է եւ գուցե անգամ մասնակցություն՝ գալիք աղետին:

խատակազմին ամրացնելու դեպքում ՄԻՊ-ի կողմից այժմ գրադեցվող (քաղաք Երեւան, Պուշկինի 56ա հասցեում գտնվող) վարչական շենքը ընդգրկել պետգույքի կառավարման կոմիտեի հաշվեկշռում եւ կարող է օգտագործվել այլ պետական մարմնի կարիքների համար:

ՀԱՅ ԳԱՏԻ ԳՐԱՄԵՆՅԱԿԸ ԻՐ ՀԻԱՍԹԱՓՈՒԹՅՈՒՆՆ Է ԱՐՏԱՀԱՅՏԵԼ

Ի պատասխան Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի կողմից Իլիամ Ալիեւի COP29-ի ղեկավարման ժամանակ հրապարակված շնորհավորական հայտարարություններին, Եվրոպայի Հայ դատի գրասենյակը իր հիասթափությունն է հայտնում եւ հիշեցնում Եվրոպական խորհրդի նախագահին հոկտեմբերի 24-ին լիագումար նիստի կողմից ընդունված բանաձեռը: Այս մասին գրված է՝ Եվրոպայի Հայ դատի գրասենյակի կողմից Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելին ուղարկված բաց նամակում:

«Եվրոպայի խորհրդարանը դատապարտում է Ադրբեյջանին մարդու իրավունքների եւ միջազգային իրավունքի խախտման համար:

Բանաձեռի «Q» կետում ընդգծվում է, որ Ադրբեյջանի հարձակումը Լեռնային Ղարաբաղի վրա * ներկայացնում է մարդու իրավունքների եւ միջազգային իրավունքի կոպիտ խախտում, 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հրադադարի հայտարարության ակնհայտ խախտում եւ ԵՄ միջնորդությամբ ստանձնած բանակցությունների ընթացքում ստանձնած պարտավորությունների չկատարումը:

Փաստորեն, նախագահ Միշելը հրապարակավ մի քանի անգամ ընդգծել է, որ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության հիմնարար իրավունքները ԵՄ-ի համար սկզբունքային հարց են: Ի պատասխան՝ Ադրբեյջանի իրականացրեց էթնիկ գտումների դասագրքային օրինակ:

Ցավոք, մենք պետք է դիտարկենք, որ ոչ միայն ձեր միջնորդությունը ձախողվեց, այլ նաեւ դրա հետեւանքով ձեր գործունեությունը շարունակում է վնասել ԵՄ հեղինակությանը», - գրված է նամակում:

ԹՈՒՆԲԵՐԳԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ «ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ԵՆ» ԱԳՐԲԵՋԱՆԻ ԱՐՉԱԳԱՆՔԸ

«Անընդունելի է ադրբեյջանա-հայկական անցյած հակամարտության վերաբերյալ որեւէ պնդում անել՝ առանց այդ հարցերի մասին տեղյակ լինելու»:

Այս մասին BBC-ի ադրբեյջանական ծառայության հետ զրույցում ասել է Ադրբեյջանի ԱԳՆ խոսնակ Այխան Հաջիգադեն՝ մեկնաբանելով Չվեդ բնապահպան ակտիվիստ Գրետա Թունբերգի մասնակցությամբ Վրաստանում կազմակերպված բողոքի ցույցը:

Նոյեմբերի 11-ին Թունբերգը բողոքի ակցիա էր կազմակերպել Թբիլիսիում, ցուցարարները քննադատել էին COP29-ը հյուրընկալող Ադրբեյջանին՝ նշելով, որ այն ավտորիտար երկիր է, արդյունահանում է նավթ ու գազ եւ չի կարող ընդունել կլիմային առնչվող գագաթնաժողով:

Հաջիգադեի խոսքով՝ Թունբերգի գործողություններն «անընդունելի են»:

ՆՈՐԱՏՈՒՄՅԻ ԱԼԻԿԻ ԵՂԲՈՐՈՐԴՈՒ ԳՈՐԾՈՎ

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԸ ՈՐՈՇՈՒՄ Է ԿԱՅԱՑՐԵԼ

ՀՀ վերաքննիչ ֆրեական դատարանը որոշում է կայացրել ֆրեական հեղինակություն Ալիկի Բանդուրյանի՝ Նորասուցի Ալիկի եղբորդու ֆրեական գործով եւ մեծել է նրան ազատ արձակելու բողոքը: Նշենք, որ գործը քննել է դատավոր Վաչե Մարգարյանը, որն առավել հայտնի է ԱՄՏ նախկին սֆորեմի, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ձայնագրության գործով անցնող դատավոր Վաչե/Հրաչ Մարգարյան:

Հիշեցնենք, որ հուլիսի 17-ին կրակոցներ, սպանություն, սպանության փորձի դեպք էր տեղի ունեցել Գեղարքունիքի մարզում: Երեւան-Սեւան ավտոճանապարհի Սեւանի վարչական տարածքում գործող «Best Western Bohemian Resort» հանգստյան գոտում հնչած կրակոցներից սպանվել էր Սեւանի ավագանու «Սարգիս Մուրադյան» դաշինքի անդամ Արսեն Աֆիյանը:

Գործով կալանավորվել է քրեական հեղինակություն Արա Բանդուրյանի որդին՝ Լեւոն Բանդուրյանը, որի սենյակից հայտնաբերվել է զենք, ու նրա հետ հյուրանոցի սենյակում է եղել եւս մեկ անձ, որը նրա ընկերն է:

Քրեական հեղինակություն Արա Բանդուրյանի որդին՝ Լեւոն Բանդուրյանը եւ 40-ամյա տղամարդը, մի խումբ անձանց հետ հանգստանալիս են եղել Երեւան-Սեւան-Իջեւան ավտոճանապարհի հարակից հյուրանոցային համալիրում, որտեղ վիճաբանության մեջ են մտել Նշված վայր հաճախած՝ Սեւան քաղաքի 37 բնակիչ, Աբովյան քաղաքի 42-ամյա բնակիչ տղա-



մարդկանց եւ Երեւան քաղաքի 36-ամյա բնակիչ կնոջ հետ:

Վիճաբանությունը վերածվել է ծեծկռուտուքի, որի ընթացքում հնչել են անկանոն կրակոցներ, ինչի հետեւանքով Սեւանի 37-ամյա, Աբովյանի 41-ամյա բնակիչները, ինչպես նաեւ Նշված հյուրանոցային համալիրի անվտանգության 56-ամյա աշխատակիցը ստացել են հրազենային մարմնական վնասվածքներ:

Իսկ ինչն է եղել վիճաբանության բուն պատճառը:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած նախական տեղեկությունների համաձայն՝ սպանված ավագանու անդամ Արսեն Աֆիյանը բարձր է խոսել հյուրանոցում ու նրան նկատողություն է արել քրեական հեղինակության որդին, ինչից էլ սկսվել թե՛ խոսակցությունը ու կրակոցներ են հնչել:

ՔՆԱՐ ՍԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԻՆՉՈՒ ԵՆ ԿԱՆԻՎԵԼ ԶԱՐԳԵՐԻ ՆԵՐԿՐՄԱՆ ՓՈՐՉԵՐԸ

Պետական եկամուտների կոմիտեի պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման եւ հսկողության վարչությունը շարունակում է պայքարը ՀՀ պետական սահմանով ապօրինի տեղափոխվող ապրանքների հայտնաբերման ուղղությամբ:

Օրերս «Բագրատաշեն» մաքսային անցման կետում բացահայտվել է թանկարժեք մետաղյա զարդերի անօրինական ներմուծման 2 դեպք:

Այսպես, Վրաստանից Հայաստան ժամանած ՀՀ քաղաքացի Ա.Բ.-ի վարած մարդատար ավտոմեքենայի նկատմամբ իրականացվող հսկողության ժամանակ, վերջինս մաքսային ծառայողներին հայտնել է, որ հայտարարագրման ենթակա ապրանքներ չունի, սակայն մաքսային մարմնի շփակերի կառավարման ավտոմատ համակարգի ցուցումների համաձայն, մաքսային գնումով իրականացվելու նպատակով ավտոմեքենան ուղղորդվել է խորը գնման անգար, ինչի արդյունքում տրանսպորտային միջոցի ետնամասի նստատեղի վրա դրված բաճկոնի գրպակից հայտնաբերվել է 2 պոլիէթիլենային թափանցիկ փաթեթ, որոնցում առկա են եղել ոսկյա զարդեր: Այնուհետեւ իրականացված անձի մաքսային գնման ընթացքում էլ քաղաքացու վերարկուի ծոցագրպաններից հայտնաբերվել է 4 պոլիէթիլենա-

յին թափանցիկ փաթեթ, որոնցում եւս առկա են եղել ոսկյա զարդեր: Զարդերի ընդհանուր քաշը կազմել է 3 կգ 16 գրամ: Մեկ այլ դեպքով էլ «Բագրատաշեն» մաքսային անցման կետ ժամանած քաղաքացին մաքսային ծառայողի հարցին՝ արդյոք իր մոտ ունի հայտարարագրման ենթակա ապրանք, բացասական պատասխան է տվել, սակայն մաքսային գնման արդյունքում քաղաքացու պայուսակի միջոց հայտնաբերվել են շուրջ 1,5 կգ արծաթյա զարդեր:

Վերոնշյալ փաստերի առթիվ կազմվել են մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություններ:

ՄԵԿ ՕՐՈՒՄ ԲԱՑԱՐԱՅՑՎԵԼ Է ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ 111 ԳԵՊԸ

Ըստ ոստիկանության օպերատիվ հարողագրությունների ամփոփագրերի՝ նոյեմբերի 13-14-ը ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 111 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:

Մասնավորապես, բացահայտվել է թմրանյութի հայտնաբերման՝ 26, տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու՝ 14, ֆիզիկական ներգործության՝ 10, անձնական ունեցվածքի գողության՝ 7, հոգեկան

ներգործության՝ 6, մարմնական վնասվածք պատճառելու՝ 5, զենք-զինամթերքի առգրավման, սառը զենքի հայտնաբերման, աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելու, բնակարանային գողության, պաշտոնեական լիազորությունների չարաշահման ու կեղծ փաստաթղթի՝ 3-ական, վստահված գույքի հափշտակման, խարդախության, թմրանյութի իրացման, խոշտանգման, համակարգչային հափշտակության ու ապօրինի ձեռնարկատիրական գործունեության՝ 2-ական, գույքը ոչնչացնելու կամ վնասելու, բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտականությունների չկատարման, անհետաձգելի միջամտության որոշման պահանջները խախտելու, ինքնիրավչության, անձի տիրապետությունից դուրս եկած գույքին տիրանալու, շինարարական աշխատանքի պաշտպանության կամ անվտանգության ապահովման կանոնները խախտելու, ծնողից երեխային ապօրինի բաժանելու եւ պետական ունեցվածքի գողության՝ 1-ական դեպք:

Նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել է անձնական ունեցվածքի գողության 2 եւ մարմնական վնասվածք պատճառելու 1 դեպք:

Հայտնաբերվել է 5 հետախուզվող, կամավոր ներկայացվել՝ 3-ը:

Գրանցվել է զենք-զինամթերքի կամավոր հանձնման 4 դեպք:

Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 14 պատահար. 2 մարդ զոհվել է, 16-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԵՐՄԱՆ ԿԵՆԹԱՐԿԵՆ



Հակակոռուպցիոն դատարանում շարունակվում է Մարտի 1-ի գործով Նիստը: Այս գործով անցնող 2-րդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը եւ նրա նախկին ենթակաները Սեյրան Օհանյանը Յուրի Խաչատուրովը դատարան չեն ներկայացել:

Նիստերի քարտուղարն ասաց, որ մեղադրյալներ Օհանյանն ու Խաչատուրովը պատշաճ ծանուցվել են, իսկ Քոչարյանի ծանուցումը հետ է վերադարձվել չպահանջված նշումով:

Քոչարյանի փաստաբան Արամ Վարդեանյանը առարկեց դատարանի գործողությունների դեմ մեղադրյալ եզրույթը օգտագործելու համար: Հանրային մեղադրող Հայկ Հովհաննիսյանը միջևորդեց պատշաճ ծանուցվածներին հարկադրաբար դատարան ներկայացնել:

Քոչարյանի, Օհանյանի, Խաչատուրովի փաստաբանները առարկեցին միջևորդության դեմ, պնդելով իրենց նախկին պաշտպանյալները մեղադրյալի կարգավիճակ չունեն հետեւաբար պարտավոր չեն ներկայանալ դատարան, եւ հարկադրաբար ներկայացնելը իրավաչափ չէ:

Դատարանը որոշեց Սեյրան Օհանյանին, Յուրի Խաչատուրովին եւ Ռոբերտ Քոչարյանին բերման ենթարկել մյուս նիստում նրանց մասնակցությունն ապահովելու նպատակով:

5-ԻՑ ԱՎԵԼԻ ԿՐԱՆՈՑՆԵՐ՝ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ նոյեմբերի 14-ին ժամը 15:59-ին, Մովսես Խորենացու փողոցի առաջին հարկում գործող կարի արհեստանոցի վահանակի վրա հայտնաբերվել են կրակոցի հետքեր:

Պարզվել է, որ նոյեմբերի 13-ին ժ.15.00-ից մինչեւ ժ.15.30-ը անհայտ անձը «Տիրի» նմանվող հրացանով կրակել է վնասել է իրենց արհեստանոցի վահանակը:

Արդյունքում պարզվել է, որ կրակոցը կատարել է 16 տարեկան անչափահաս Ա.Բ.-ն, որին Սարյան փողոցի հասցեի մոտից տարել են ոստիկանություն, որտեղ անչափահասը հայտնել է, որ նոյեմբերի 13-ին ժ.15.20-ին «Տիր» հրացանով 5 անգամ կրակել է Նշված արհեստանոցի վահանակին, վերջինս ներկայացրել է «Տիր» հրացանը ու բաց է թողնվել:

● Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 13-ից 14-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 111 դեպք, որից 3-ը՝ նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍԱՐՁ

«ԴԻԼԻՋԱՆ» ՊԱՐԿԻՑ ՏԱՐԱԾՔ Է ԱՊՕՐԻՆԱԲԱՐ ՎԱՃԱՌՎԵԼ

«Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ից հայտնեցին, որ Թեղուտ գյուղի հարակից գոտում, «Ջիլուտ թալա» տարածքում որպես համայնքին պատկանող հող, օտարվել է 3 հեկտար տարածք: Այն վաճառվել է Դիլիջան համայնքի Թեղուտ գյուղի բնակչին, որն այն վաճառել է մի մեծահարուստի: Դրանից հետո, այդ հողամասին կից, նույն «Ջիլուտ թալա» տարածքում Դիլիջան ազգային պարկին պատկանող անտառում մասնավորին է վաճառվել 2 հեկտար հող, որը նույնպես հետո դարձել է վերոհիշյալ հարուստին պատկանող տարածք: Հիմա այդ տարածքում հանգստի գոտի են սարքում, մեկ քոթեջ արդեն սարքել են, 2-ի շինարարությունն ընթացքի մեջ է: Ինչպես, փաստաթղթային ինչ գործողություններով է ազգային պարկին պատկանող 2 հեկտար տարածքը կադաստրի վկայականով դարձել համայնքի հող եւ որպես այդպիսին՝ օտարվել: Ազգային պարկից հայտնում են, որ պետական վերահսկողության ծառայությունը Դիլիջան ազգային պարկին պատկանող 2 հեկտար անտառի ապօրինի օտարման փաստի մասին գրավոր դիմել է բնապահպանական տեսչության, այդ տեսչությունը կատարել է վնասի հաշվարկ ու գործն ուղարկել ՀՀ քննչական կոմիտե: Դիլիջան ազգային պարկից հայտնում են, որ 2 հեկտար հողի օտարումը կատարվել է Դիլիջանի ՔՊ-ական համայնքապետ Դավիթ Սարգսյանի, համայնքի ղեկավարի տեղակալ Արման Բազինյանի ու վերջինիս մտերիմ ընկեր, Դիլիջանի ազգային պարկի տնօրեն, Դիլիջան համայնքի ավագանու անդամ Ռոբերտ Ալիխանյանի համագործակցությամբ: Ի դեպ, վերջինս նախկինում Դիլիջան համայնքի կողմից եղել է Դիլիջան ազգային պարկի քարտեզագրման հանձնաժողովի անդամ: Դիլիջանի ազգային պարկը հանդիսանում է բնության հատուկ պահպանվող տարածք, այդտեղից հողի օտարում կարող է լինել միայն կառավարության որոշմամբ, ինչը տվյալ դեպքում չի եղել: Դիլիջանի համայնքապետարանը նշված տարածք տանող ճանապարհի շինարարության թույլտվություն է սովել, ճանապարհ է կառուցվել: Ազգային պարկից հայտնում են նաեւ, որ ազգային պարկի «Շամախյան» տեղամասում, Վանաձոր տանող ճանապարհի մոտ 3000 քառակուսի մետր տարածքի ռելիեֆն ապօրինի փոխել են, տարածքը հարթեցրել են, սովել Լիմոնադի Վարդան անունով, Դիլիջանում հայտնի տնտեսվարողին, ով այդտեղ տնտեսական գործունեություն է իրականացնում: Ազգային պարկի նույն «Շամախյան» տեղամասում ապօրինի կերպով 33 քառակուսի տարածք են հարթեցրել, սովել «Պոշկո» մականունով մեկին, ով ազգային պարկի այդ տարածքից ապօրինի կերպով վառելիքայտ է պատրաստում, վաճառում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ Տավուշ

ՆՈՐ ՕՐԵՆՔՆԵՐ

2025-ԻՑ ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՕՐԵՆՔԸ ԿԴԱԳԱՐԻ ԳՈՐԾԵԼ ԵՐԵՎԱՆՈՒՄ

2025 թվականից հունվարի 1-ից ուժի մեջ են մտնում հիփոթեկային վարկի ԵՐԶԱՆԱԿՈՒՄ ԵԿԱՄՏԱԿԻՆ հարկի վերադարձի սահմանափակումները:

Եկամտահարկի վերադարձով ձեռք բերվող բնակարանների համար պետության կողմից վերադարձվող գումարը չի կարող գերազանցել 750,000 դրամը եռամսյակի հաշվով: Համապատասխան որոշումն ընդունվել էր հոկտեմբերի 17-ի կառավարության նիստում:

Սա նշանակում է, որ այն մարդիկ, որոնք եկամտային հարկի վերադարձով բնակարան ձեռք կբերեն մյուս տարվանից, պետությունը նրանց ամեն եռամսյակ փոխհատուցելու է ոչ թե վճարած ողջ եկամտահարկի գումարը, ինչպես այսօր է, այլ՝ ընդամենը 750 հազար ՀՀ դրամ: Տարբերությունը պետք է վճարի քաղաքացին՝ իր գրպանից:

Փոփոխությունը չի վերաբերելու այն քաղաքացիներին, որոնք արդեն իսկ կնքել են եկամտահարկի վերադարձով հիփոթեկային պայմանագիր:

Հավելենք, որ բացի նրանից, որ եկամտահարկի վերադարձի սահմանափակում է գործարկվել, տարեսկզբից էլ երեւանում եկամտահարկի հետ վերդարձի մասին օրենքի գործողության ժամկետը ավարտվելու է:

Ստացվում է, որ եկամտահարկի օրենքի գործարկումից հետո շինհրապարակ դարձած Երեւանում, գուցե ավելի սակավ թվով շենքեր կառուցվեն՝ համաձայն որոշ վերլուծաբանների: Տնտեսագետները կանխատեսում են նաեւ, որ բնակարանաշինությունը Երեւանում



կհայտնվի կոլապսում եւ գուցե արձանագրվի բնակարանների գների կտրուկ աճ, ավելին քան հիմա է:

Սա հերթական քայլն է իշխանության կողմից եկամտահարկի վերադարձի սահմանափակումներ կիրառելու ուղղությամբ:

2027-ի հունվարի 1-ից հետո ստացված հիփոթեկային վարկերի մասով վերադարձ չի լինելու, եթե գույքը գտնվում է Երեւանի հարակից՝ Արագածոտն, Արարատ, Արմավիր եւ Կոտայք մարզերում: Իսկ 2029-ի հունվարի 1-ից առհա-

սարակ եկամտահարկի վերադարձով բնակարանի ծրագիրը չի գործելու:

Հարկ է նշել եւ գուշացնել, որ Նիկոլ Փաշինյանն այսօր Ազգային ժողովում հայտարարեց, որ պատրաստվում են Հայաստանի Հանրապետության «Հարկային օրենսգրքում» փոփոխություններ կատարել կամ որ ավելի վատ է նոր հարկային օրենսգրքը գրել, քանի որ իշխանությունը ԱԱՀ-ով հարկումը համարում է ապապետական հարկման եղանակ:

ԷՄՍՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿԱՐԵՎՈՐ

ՔԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՔԻ Է ԱՅՑԵԼԵԼ ՀԱՅԱՍՏԱՆ

ՀՀ զբոսաշրջության կոմիտեն հրապարակել է ընթացիկ տարվա հոկտեմբեր ամսին դեպի Հայաստան զբոսաշրջային այցելությունների վերաբերյալ վիճակագրական տվյալներ:

Ընթացիկ տարվա հոկտեմբեր ամսին Հայաստան այցելել է 203,810 զբոսաշրջիկ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 195,396-ի համեմատ:

Դիտարկվող ժամանակահատվածում Հայաստան այցելած զբոսաշրջիկների ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել Ռուսաստանին (ընդհանուրի 43%), Վրաստանին (11%) եւ Իրանին (7%):

ԿԱՐԵՎՈՐ

տեղումներ, լեռնային շրջաններում՝ ձյուն: Քամին՝ հյուսիսարեւմտյան՝ 2-5 մ/վ, նոյեմբերի 16-ին առանձին շրջաններում սպասվում է քամու ուժգնացում մինչեւ 17-21 մ/վ: Օդի ջերմաստիճանն էապես չի փոխվի:

ԿԱՐԵՎՈՐ

տեւ գորգարվեստը չի մահացել, փոխվել են արտադրության ձեւերը՝ տնայնագործությունից անցում է կատարվել գործարանային ձեւերին, բայց գորգագործությունը շարունակում է ապրել: Մեզ համար կարեւոր էր, որ այս ցուցասարահում, որտեղ ներկայացված են մեր հավաքածուի երեսուկից ավելի լավագույն նմուշներ՝ համադրված տարբեր նյութերով, իր տեղն ունենա այսօր մեր գորգագործական մշակույթի վերակենդանացման գործում ակտիվ դերակատարություն ունեցող ընկերություններից մեկը՝ «Մեգրեյան կարպետ»-ը: Անհրաժեշտ էր այստեղ պրակտիկ ներկայացնել, թե ինչպես են գործում գորգը, ցույց տալ, թե որն է հայկական ավանդույթը», -ասաց նա:

«Աստղահավք» գորգի կրկնօրինակն այժմ թանգարանի հուշանվերային տաղավարում է: Այն վաճառելու պարագայում թանգարանը հնարավորություն կունենա ձեռք բերել մեկ այլ նմուշ, որը եւս կներկայացնի հայկական գորգագործական մշակույթը: Լեոնիդ Անդրեասյանի խոսքով՝ ընտրել են «Աստղահավք» գորգը, քանի որ այն շատ գեղեցիկ է եւ հազվադեպ հանդիպող դիզայն ունի:

«Գորգն արցախյան գանձերից մեկն է: Գորգը հետաքրքիր խորհուրդ ունի. այն ամբողջությամբ հավքերով է պատկերված: Գորգի վրա հեքիաթային հավքերն են, որոնք, ըստ ժողովրդական բանահյուսության, մինչեւ երկինք են բարձրացել, աստղեր են հավաքել ու երկիր բերել այն զույգերի համար, որոնք նոր կյանք պետք է մտնեին, բախտավոր ու երջանիկ լինեին», -պատմեց Անդրեասյանը:

ՄՊԱՍՎՈՒՄ ԵՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ

Երեւանում նոյեմբերի 15-ի ցերեկը, 16-ի գիշերը, 17-ի ցերեկը, 20-ին սպասվում է առանց տեղումների եղանակ:

Նոյեմբերի 16-ի երեկոյան ժամերին, 17-ի գիշերը սպասվում է անձրեւ, 18-ին եւ 19-ին հնարավոր է կարճատեւ անձրեւ:

Մարզերում նոյեմբերի 15-ի ցերեկը, 16-ի գիշերը սպասվում է առանց տեղումների եղանակ:

Նոյեմբերի 16-ին կեսօրից հետո, 17-20-ին առանձին շրջաններում սպասվում են

«ԱՍՏՂԱՀԱՎՔ» ԳՈՐԳԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿՆ Է ՄՏԵՂԾՎԵԼ

Հայաստանի պատմության թանգարանն ու «Մեգրեյան կարպետ»-ը նոյեմբերի 15-ին համագործակցության հուշագիր ստորագրեցին, որի շրջանակում «Մեգրեյան կարպետ»-ը ստեղծել է թանգարանի գորգերի հավաքածուում պահվող ավելի քան 120 տարվա պատմություն ունեցող «Աստղահավք» գորգի կրկնօրինակը՝ Բանանցի ավանդական ձեռագործ տեխնոլոգիայով: Հուշագիրը ստորագրեցին թանգարանի տնօրեն Դավիթ Պողոսյանն ու «Մեգրեյան կարպետ»-ի տնօրեն Լեոնիդ Անդրեասյանը: Դավիթ Պողոսյանը թանգարանի եւ գորգագործական ընկերության միջեւ համագործակցությունը շատ կարեւոր է համարում ու վստահեցնում, որ այն հետաքրքիր ուղերձներ ունի:

«Երբ կազմակերպում էինք «Դվագներ ինքնության» ցուցադրությունը, նպատակ ունեինք ներկայացնել հայկական գորգի մշակույթը ոչ միայն անցյալում, այլեւ նրա շարունակական գործընթացը, որովհե-

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 14 պատահար. 2 մարդ զոհվել է, 16-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԷԿՈՔԱՐՍ»-Ը ՎԱՐՈՐԴՆԵՐԻՆ ԹՈՂԵԼ Է ԿՈՏԲԱԾ ՏԱՇՏԱԿԻ ԱՌԱՋ

ԷկոՔարս ընկերությունը հուսախաբ է արել էլեկտրական մեքենաների վարորդներին: Բանն այն է, որ ArmLur.am-ը արդեն մի քանի օր է՝ ահազանգեր է ստանում, որ ԷկոՔարս ընկերությանը պատկանող էլեկտրական տրանսպորտի լիցքավորման կայանները գրեթե մեկ ամիս է, չեն աշխատում Կենտրոնում եւ հարակից վարչական շրջաններում:

Էլեկտրական մեքենաների վարորդները, որոնք հաճախ օգտվում էին ընկերության կայանների ծառայություններից, այժմ կանգնած են մեծ խնդրի առաջ, քանի որ մեքենան մոտ տարածքում լիցքավորելու փոխարեն, ստիպված կհիմնադրվեն անցնում մարտկոցը լիցքավորելու համար:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցեց ԷկոՔարս ընկերության հետ, մեզ հավաստիացրին, որ կայանները աշխատում են, իսկ չաշխատողների պատճառն այլ է. «Մեր բոլոր կայանները հիմնականում աշխատում են: Կան որոշ կայաններ, որ տեխնիկական խնդիրներ ունեն, բայց ընդհանուր առմամբ մենք աշխատում ենք: Մեր հիմնական կայաններն աշխատում են: Կան կայաններ, որ չեն աշխատում ընդհանրապես տարածքի հոսանքի հետ կապված խնդիրների պատճառով, դա մեզ հետ կապված չէ», - փոխանցեցին «ԷկոՔարս» ընկերությունից:

Վարորդները վրդովված են, քանի որ ընկերությունը վերցրել էր պարտավորություն ապահովելու վարորդներին լիցքավորման կայաններով, սակայն գրեթե մեկ ամիս բամաթով բողոքներից հետո ընկերությունը չի շտկում խափանումները:

Մաշտոցի 5, հորենացի փողոց հասցեներում, Ոսկու շուկայի տարածքում, Մարզահամերգային համալիրի տարածքում տեղադրված կայանները ամիսներ շարունակ չեն աշխատում, իսկ ընկերության օնլայն հավելվածը պարզապես չի աշխատում:

ՎԵՐԻՆ ԼԱՐՍՈՒՄ ԸՈՒՐՁ 600 ՀԱՅԿԱԿԱՆ ԲԵՌՆԱՏԱՐ Է ԿՈՒՏԱԿՎԵԼ

Վերին Լարսի անցակետի մոտ շուրջ 600 հայկական բեռնատար է կուտակվել: Այս մասին են վկայում Գյումրիի Օսթրիայի ճանապարհային երթուղիների կազմակերպման կենտրոնի տվյալները:

Ըստ տվյալների՝ հերթում գրանցված է 1832 բեռնատար: Դրանցից 580-ը հայկական են:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԵՐԿԿՈՂՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Նոյեմբերի 15-ին Երեւանում կայացել է ԵԱՏՄ ագրոարդյունաբերական ֆաղափականության խորհրդի երրորդ նիստը, որը վարել է խորհրդի նախագահ, ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեորգ Պապոյանը:

Նիստին մասնակցել են Ռուսաստանի Դաշնության գյուղատնտեսության նախարար Օկսանա Լուտը, ԵՏՀ Արդյունաբերության եւ ագրոարդյունաբերական համալիրի հարցերով Կոլեգիայի անդամ (Նախարար) Գոհար Բարսեղյանը, ինչպես նաեւ տեսակապով՝ Բելառուսի գյուղատնտեսության եւ պարենի նախարար Անատոլի Լինեւիչը, Ղրղզստանի գյուղատնտեսության նախարար Բակիթ Տորոբաեւը, Ղազախստանի գյուղատնտեսության նախարարի տեղակալ Երմեկ Կենժեխանուլին: Նիստին մասնակցել են նաեւ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալներ Արման Խոջոյանը եւ Նարեկ Հովակիմյանը:

Քննարկվել են Եվրասիական տնտեսական միությունում ագրոարդյունաբերական համալիրի կայուն զարգացմանն ու ԵԱՏՄ անդամ երկրների միջեւ փոխգործակցության արդյունավետության բարձրացմանը, ԵԱՏՄ շրջանակներում գյուղատնտեսության պետական աջակցության հեռանկարային ուղղություններին վերաբերող մի շարք հարցեր:

Նիստի ընթացքում անդրադարձ է կատարվել ԵԱՏՄ անդամ պետությունների ագրոարդյունաբերական համալիրների կանխատեսումների համակարգի բարելավմանը, ԵԱՏՄ-ում մինչեւ 2030 թ. տնտեսական գոր-



ծընթացների հետագա զարգացման մասին Հռչակագրի դրույթների իրականացմանը, ինչպես նաեւ ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից ԵԱՏՄ-ում օրգանական արտադրանքի ճանաչման կարգի մասին համաձայնագրի համաձայնեցմանը:

Նիստին նախորդել է նախարարներ Գեորգ Պապոյանի եւ Օկսանա Լուտի հանդիպումը, որի ընթացքում քննարկվել է երկկողմ տնտեսական օրակարգին առնչվող հարցերի լայն շրջանակ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՔՆՆԱՐԿՎԵԼ Է ԵՐԿԿՈՂՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ԼԱՅՆ ԸՐՁԱՆԱԿ

Նոյեմբերի 15-ին Երեւանում կայացել է ԵԱՏՄ ագրոարդյունաբերական ֆաղափականության խորհրդի երրորդ նիստը, որը վարել է խորհրդի նախագահ, ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեորգ Պապոյանը:

Նիստին մասնակցել են ՌԴ գյուղատնտեսության նախարար Օկսանա Լուտը, ԵՏՀ Արդյունաբերության եւ ագրոարդյունաբերական համալիրի հարցերով Կոլեգիայի անդամ (Նախարար) Գոհար Բարսեղյանը, ինչպես նաեւ տեսակապով՝ Բելառուսի գյուղատնտեսության եւ պարենի նախարար Անատոլի Լինեւիչը, Ղրղզստանի գյուղատնտեսության նախարար Բակիթ Տորոբաեւը, Ղազախստանի գյուղատնտեսության նախարարի տեղակալ Երմեկ Կենժեխանուլին: Նիստին մասնակցել են նաեւ ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալներ Արման Խոջոյանը եւ Նարեկ Հովակիմյանը:

Քննարկվել են Եվրասիական տնտեսական միությունում ագրոարդյունաբերական համալիրի կայուն զարգացմանն ու ԵԱՏՄ անդամ երկրների միջեւ փոխգործակցության արդյունավետության բարձրացմանը, ԵԱՏՄ շրջանակներում գյու-

ղատնտեսության պետական աջակցության հեռանկարային ուղղություններին վերաբերող մի շարք հարցեր:

Նիստի ընթացքում անդրադարձ է կատարվել ԵԱՏՄ անդամ պետությունների ագրոարդյունաբերական համալիրների կանխատեսումների համակարգի բարելավմանը, ԵԱՏՄ-ում մինչեւ 2030 թ. տնտեսական գործընթացների հետագա զարգացման մասին Հռչակագրի դրույթների իրականացմանը, ինչպես նաեւ ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից ԵԱՏՄ-ում օրգանական արտադրանքի ճանաչման կարգի մասին համաձայնագրի համաձայնեցմանը:

Նիստին նախորդել է նախարարներ Գեորգ Պապոյանի եւ Օկսանա Լուտի հանդիպումը, որի ընթացքում քննարկվել է երկկողմ տնտեսական օրակարգին առնչվող հարցերի լայն շրջանակ:

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՊՐԲԵՋԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ

Աղբրեջանի եւ Հայաստանի միջեւ տրանսպորտային հաղորդակցությունների բացումը նոր թեմա չէ,

Աղբրեջանում կառուցվում է տրանսպորտային կապի ենթակառուցվածք, որը շուտով կհասցվի Հայաստանի հետ

սահման, այս մասին ասել է Աղբրեջանի ԱԳ նախարար Ջեյիուն Բայրամովը:

Նա նշել է, որ 2020 թվականի եռակողմ հայտարարությունում հատուկ կետ կա դրա վերաբերյալ. «Դրանում հստակեցված են այն պարտավորությունները, որոնք Հայաստանը ստանձնում է: Այս թեման երկար ժամանակ քննարկվել է: 3,5 տարվա քննարկումներից հետո «ձեռք է բերվել պայմանավորվածություն» արտահայտությունը համարում ենք ուշացած: Այս պայմանավորվածությունը պետք է վաղուց ձեռք բերված լիներ: Եթե այս հարցի վերաբերյալ դեռ պաշտոնական փաստաթուղթ չկա, եթե Հայաստանն այս ուղղությամբ աշխատանքներ չի սկսել, ուրեմն դեռ բաց հարցեր կան: Իսկ Աղբրեջանի տարածքում երկար ժամանակ արագ տեմպերով աշխատանքներ են տարվում տրանսպորտային կապի ենթակառուցվածքի ստեղծման ուղղությամբ, որը շուտով կհասցվի Հայաստանի հետ սահման», - ասել է նա:

Նա հավելել է, որ ներկայում աղբրեջանական կողմի ուշադրությունը կենտրոնացած է COP29-ի վրա, եւ հայկական կողմի հետ հանդիպումը խաղաղության պայմանագրի նախագիծը քննարկելու համար մինչեւ դեկտեմբեր անհնար է: Բայրամովի խոսքով՝ նման հանդիպում կարող է լինել դեկտեմբերին կամ հունվարին, սակայն կոնկրետ պայմանավորվածություն այս հարցում դեռ չկա:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՈՒՏՔԸ՝ ԱՉԱՏ

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՀՆԴԿԱՍԱՆ ՖԻԼՄԵՐԻ ՓԱՌԱՏՈՆԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը «Մուսկվա» կինոթատրոնում մասնակցել է Հնդկական ֆիլմերի 2024 թվականի փառատոնի բացմանը:



Ողջույնի խոսքում նախարարի տեղակալը շեշտել է՝ հայ և հնդիկ ժողովուրդների բարեկամությունը հազարամյակների պատմություն ունի և գալիս է դարերի խորքից:

«Նորանկախ Հայաստանում Հայաստան-Հնդկաստան կապերն ամրապնդվում են. Հայաստանը մեծապես կարելու է Հնդկաստանի հետ բարեկամական և փոխշահավետ կապերի ամրապնդումն ու համագործակցային նոր հարաբերությունների կառուցումը»,- ասել է նախարարի տեղակալը՝ շեշտելով, որ երկկողմ փոխհարաբերություններում մշակույթի և կրթության ոլորտները առանձնակի կարևորություն ունեն:

Արթուր Մարտիրոսյանի խոսքով՝ Հայաստանը մշտապես ակտիվ մասնակցություն է ունենում Հնդկաստանում կազմակերպվող տարաբնույթ մշակութային միջոցառումների և փառատոնների՝ Ներկայացվելով հայկական հարուստ ու բազմամյա մշակույթը. ազգային երգ ու պար, ժողովրդական նվագարանների կատարումներ, ձեռարվեստ և այլն:

«Հայաստանի և Հնդկաստանի միջև մշակութային համագործակցությունն իսկապես բազմաբովանդակ է և ընդգրկում է նաև կինոյի ոլորտը: Առկա է երկկողմ պատրաստակամություն՝ կինոարտադրության ոլորտում սերտորեն համագործակցելու և կապերը զարգացնելու առումով:

Համագործակցության պատրաստակամությունն ամրագրվել է նաև անցյալ տարի Հայաստանի ազգային կինոփառատոնի հետ ստորագրված հուշագրով, որը հնարավորություն է ընձեռում ոչ միայն Հայաս-

տանում հնդիկ կինոարտադրողների կողմից ֆիլմերի նկարահանման, այլև համատեղ կինոարտադրության, ինչպես նաև կինոժառանգության պահպանման տեսանկյունից»,- նշել է Արթուր Մարտիրոսյանը՝ կարելու էլով Հայաստանում հնդկական ֆիլմերի փառատոն կազմակերպելու Հնդկաստանի դեսպանության նախաձեռնությունը:

Հայաստանում Հնդկաստանի արտակարգ և լիազոր դեսպան Նիլակշի Սահա Սինհանին իր խոսքում շեշտել է, որ հնդկական կինոն իրենց երկրի մշակույթի անբաժանելի մասն է և համաշխարհային կերպով կարելու է դերակատարներից մեկը:

«Հնդկական կինոն ընդգրկում է մի շարք տարածաշրջանային կինոարդյունաբերություններ, որոնք նպաստում են հնդկական կինոարտադրության բազմազանության ապահովմանը: Հարուստ ավանդույթներով հնդկական կինոն ար-

ձագանք է գտնում ամբողջ աշխարհի հանդիսատեսի շրջանում՝ խթանելով միջմշակութային փոխըմբռնումը սահմաններից այն կողմ»,- ընդգծել է դեսպանը՝ շեշտելով, որ հնդկական կինոն սիրված է ընդունված է հատկապես Հայաստանում, որտեղ Ռաջ Կապուրը և Միթուն Չակրաբորտին՝ նույն ինքը՝ Ջիմմին և մյուս հայտնի դերակատարները շարունակում են ջերմություն, կարոտ և մշակութային կապ առաջացնել:

Փառատոնի շրջանակում մինչև նոյեմբերի 17-ը կցուցադրվեն «Յաջ Ռաջ ֆիլմ» ընկերության վեց կինոնկարներ՝ «Սուլան», «Բայբերները 3», «Բանթի և Բաբլի», «Պահեր», «Հառաջ, Հնդկաստան» և «Պատհանը»:

Ցուցադրությունների մուտքն ազատ է: ՀՀ ԿԳՄՄՆ Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՎԱՔԱԿԱՆԸ 1:0 ՀԱՇՎՈՎ ՊԱՐՏՎԵՑ ՖԱՐԵՐՅԱՆ ԿՂԶԻՆԵՐԻՆ

ՈւեՖԱ-ի Ազգերի լիգայի հիվանդանոցի մրցափուլի շրջանակում այսօր՝ նոյեմբերի 14-ին Հայաստանի ազգային հավաքականը Երեւանի Վազգեն Սարգսյանի անվան «Հանրապետական» մարզադաշտում հյուրընկալեց Ֆարերյան կղզիների ընտրանուն:

Հայաստանի հավաքականը պարտություն կրեց Ֆարերյան կղզիների ընտրանուն: Սուրեն Չախալյանի գլխավորած թիմը գնդակ բաց թողեց առաջին խաղակեսի միջնամասում: Այս մասին գրում է Armsport.am-ը:

33-րդ րոպեին նշանակված 11 մետրանոցն անվրեպ իրացրեց մրցակցի ավագ Վիլջորմուր Դավիդսենը:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի հավաքականը կատարեց 27 հարված, որից դիպուկ էր 9-ը: Հայաստանի հավաքականն այս պարտությունից հետո վաստակած 4 միավորով զբաղեցնում է մրցաշարային աղյուսակի 3-րդ հորիզոնականը:

Խաղարկության վերջին հանդիպումը կկայանա նոյեմբերի 17-ին, իսկ մրցակիցը կլինի Լատվիայի հավաքականը:

ԲԱՍԿԵՏԲՈՒ

Հայաստանի բասկետբոլի հավաքականի մարզչական շտաբը հրապարակել է այն բասկետբոլիստների անունները, որոնք պետք է նախապատրաստվեն աշխարհի առաջնության նախընտրական փուլի՝ Ավստրիայի հետ Երեւանում կայանալիք հանդիպմանը:

Հայաստանի հավաքական. Անդրե Սպայթ Մկրտչյան, Դանիել Կիրակոսյան, Դանիել Գեորգյան, Տիգրան Մկրտումյան, Ալեքսեյ Չիժենկո, Յուրա Մելիքյան, Քրիս Ջոնս, Զակ Տավիտյան, Գաբրիել Աճեմյան, Արտյոմ Թավաքալյան, Ալեքսան Թադեոսյան, Արկադի Մկրտիչյան, Քրիստիան Վիտալ, Կարեն Մելիքյան:

«Երկարատեւ ընդմիջումից հետո հավաքական է վերադառնում Արտյոմ Թավաքալյանը: Ազգային հավաքականի նորեկներից է նաև Դանիել Կիրակոսյանը:

Ազգային հավաքականի պաշտոնական խաղերում իր նորամուտը կարող է նշել նաև Հայաստանի մինչև 16 և 18 տարեկանների հավաքականի նախկին խաղացող Ալեքսեյ Չիժենկոն:

Առաջին անգամ Հայաստանի հավաքական է հրավիրվել իտալական «Տորտոնա» ակումբի ամերիկացի խաղացող Քրիստիան Վիտալը:

Գերոզի Դազանյանի գլխավորությամբ Հայաստանի հավաքականը նոյեմբերի 15-ից կսկսի ուսումնամարզական հավաքը, որը կկայանա Օլիմպականում: Մարզչական շտաբում ընդգրկված են նաև Արեգ Վաթյանը և Միքայել Պողոսյանը:

Հայաստան-Ավստրիա հանդիպումը կկայանա նոյեմբերի 24-ին»,- ասված է ԿԳՄՄ նախարարության հրապարակած հաղորդագրության մեջ:

ՍԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՄԻՆՆ 2024»-Ը ԿԿԱՅԱՆԱ ԱՅՍՕՐ

Այսօր՝ նոյեմբերի 16-ին, ժամը 21:00-ին, տեղի կունենա «Մանկական Եվրատեսիլ 2024»-ը:

Հիշեցնենք, որ Հայաստանը «Մանկական Եվրատեսիլ 2024» երգի մրցույթում կներկայացնի Լեո Մկրտչյանը:

Հայաստանի այս տարվա պատվիրակն ընտրվել է Հանրային հեռուստաընկերության նախապես հայտարարած մրցույթի արդյունքում, որին 100-ից ավելի հայտ էր ստացվել:

Տեղի է միջազգային լավագույն մասնագետներից բաղկացած փորձագիտական խմբի որոշմամբ լավագույնն է ճանաչվել 10-ամյա Լեոն: Հայաստանյան պատվիրակի մրցութային երգը և տեսահոլովակը կիրապարակվեն շուտով:

«Մանկական Եվրատեսիլ 2024» երգի մրցույթն այս տարի անցկացվելու է Իսպանիայի մայրաքաղաք Մադրիդում նոյեմբերի 16-ին՝ «Ծաղկենք» խորագրի ներքո:

Ռ. ԱՄԻՐԻՆՆՅԱՆԻ 85-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԵՐԳ

ԿԳՄՄ նախարարության աջակցությամբ «Արամ Խաչատրյան» համերգատրահում տեղի է ունեցել Ռոբերտ Ամիրխանյանի 85-ամյակին նվիրված հոբելյանական համերգ-ծրագրում Ռոբերտ Ամիրխանյան, «Կանտատ սիրո» խորագրով: Այս մասին հայտնում են ԿԳՄՄ-ից: Համերգին ներկա են եղել ԿԳՄՄ նախարար Ժաննա Անդրեասյանը և նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը: Նախարար Ժաննա Անդրեասյանը հանդես է եկել շնորհավորական խոսքով. «Շատ դժվար է պարտավորեցնող է խոսել այսքան սիրված արվեստագետի հոբելյանի առիթով, որի ժամանակակիցը լինելու պատիվ ունենք: Սիրելի մատերո, ջերմորեն շնորհավորում են հոբելյանի կապակցությամբ: Ինձ միշտ հիացրել են Ձեր երանդն ու ոգեւորությունը, որ փոխանցվում է բոլորիս: Ձեր բազմաժանր ժառանգու-

թյունը դարձել է մեր հանրության սեփականությունը. վստահ եմ յուրաքանչյուր ունի Ձեր ստեղծագործություններից որեւէ սիրելի կտոր, որ միշտ իր հետ է: Ձեր արվեստն ապրում է և ժամանակի մեջ դառնում անշրջելի: Մաղթում են, որ Ձեր կենսասիրությունը, ստեղծագործելու ներուժն ու եռանդն անսպառ լինեն, և Դուք միշտ լինեք մեր կողքին»: Կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանը ևս հանդես է ելույթի խոսքով և շնորհակալություն հայտնել համերգի կազմակերպման համար. «Կյանքում ամենակարեւորը ոգեւորությունը պահպանելն է, ինչը մեր միասնության շնորհիվ է: Պետք է ավելի ուշադիր լինենք մեր հոգու ու մտքի հանդեպ, որպեսզի կարողանանք մեր միասնությունը կոփել: Սա իմ կյանքի ամենաերջանիկ պահն է. այսքան հայ մարդ նստած է այստեղ ժպտուն աչքերով՝ ունկնդրելու համերգը, որտեղ հյուսվում է սիրո պատմությունը»: Համերգի մենակատար՝ Սեդա Ամիր-Կարայան, կոնտրալտո, դիրիժոր՝ Ֆրից Կրեմեր: Համերգին մասնակցել է Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը. գեղարվեստական ղեկավար է գլխավոր դիրիժոր՝ Յովհաննես Չեքիջյան:

● Նոյեմբերի 16-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Երեք ընկեր» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-6.000 դրամ:



ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ ՀՀ քաղաքացիներին որդես որդեգրել ցանկացող անձ հասցնելու համար:

Լիլիա Հարությունյան (37 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող այն քաղաքացիները, ովքեր ցանկանում են երեխա որդեգրել, դիմում են իրենց բնակության վայրի մարզպետարան (Երեւանի քաղաքապետարան)՝ ներկայացնելով՝

- 1) անձը հաստատող փաստաթուղթ,
- 2) բնակարանային պայմանների մասին տեղեկանք՝ տրված բնակության վայրից,
- 3) ընտանիքի կազմի մասին տեղեկանք՝ տրված բնակության վայրից,
- 4) զբաղեցրած պաշտոնի, աշխատավարձի եւ այլ եկամուտների մասին տեղեկանք,
- 5) անձի պատշաճ վարքագծի մասին անձնական երաշխավորություն՝ տրված կազմակերպության կամ անվազն երեք անձանց կողմից,
- 6) բժշկական փաստաթուղթ այն մասին, որ երեխա որդեգրել ցանկացող անձը հիվանդ չէ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 5-ի N 517-Ն որոշմամբ հաստատված ցանկում ներառված հիվանդություններից որեւէ մեկով,
- 7) ամուսնության վկայականի պատճենը (եթե ամուսնացած է),
- 8) երեխայի ամուսիններից մեկի կողմից որդեգրման դեպքում մյուս ամուսնու գրավոր համաձայնությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ամուսինները դադարեցրել են ամուսնական հարաբերությունները, մեկ տարվանից ավելի համատեղ չեն ապրում, եւ մյուս ամուսնու բնակության վայրն անհայտ է,
- 9) տեղեկանք որդեգրման պահին մարդու դեմ ուղղված կամ հասարակական կարգի եւ բարոյականության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատվածություն չունենալու մասին:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն


«ԺՈՂՎՈՒՐԳ». Եթե որդեգրել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացին ունի նախապես ընտրած որդեգրման ենթակա երեխա, որի կապակցությամբ առկա է ծնողների գրավոր համաձայնությունը, ապա նա դրա մասին նշում է իր դիմումի մեջ:

Էջը՝ ԱՆՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀԱՍՏԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ, թե ինչպես է կարելի է մաքրել անձի վարկային դասնությունը:

Տիգրան Սանուկյան (38 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ վարկային տեղեկատվությունը կամ այսպես կոչված «վարկային պատմությունը» վարկառուի վերաբերյալ վարկային տեղեկատվությունն է, որը բնութագրում է վերջինիս կողմից ստանձնած վարկային պարտավորությունների մասով պարտքերը, վճարումները, վճարումների սովորությունները կամ պարտավորությունների կամ դրանց կատարման վերաբերյալ տեղեկատվություններ:

Գործնականում «վատ վարկային պատմությունը մաքրել» նշանակում է ընթացիկ վարկային գեկույցներում չունենալ խնդրահարույց (ժամկետանց կամ սուբյեկտիվ չափանիշներով դասակարգված) վարկեր: Վարկային բյուրոն չպետք է ներառի վարկային գեկույցում վարկային տեղեկատվության սուբյեկտի վերաբերյալ վարկային գեկույցի տրամադրման պահին նախորդող հինգ տարուց ավելի վարկային տեղեկատվություն:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՎՈՒՐԳ». Հինգ տարին ավարտվելուց հետո նշված տեղեկատվությունը արխիվացվում է: («Վարկային տեղեկատվության շրջանառության եւ վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ ենթակետ):

ԼՈՒՐ ԿԱՐԴ

Լուսանկարը՝ համացանցից



Երեւանի պետական բժշկական համալսարանի ուսանողները երեկ հանդիսավոր կերպով Մատենադարանին հանձնեցին միջնադարյան անվանի բժշկագետ Ամիրովյա Ամասիացու «Օգուտ բժշկության» (18-րդ դար) աշխատության ընդօրինակված ձեռագիրը: Բժշկական համալսարանի ուսանողները ձեռագիրը ձեռք էին բերել իրենց միջոցներով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել



«Հայկոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎԱՐԴ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդադարաւանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից


«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	0 - 4 + 8 + 12	Արարատ	0 + 3 +17 + 19
Կոտայքի լեռներ	- 1 - 5 + 7 + 11	Արմավիր	- 1 + 2 +17 + 19
Կոտայքի նախալեռներ	0 + 2 +13 + 15	Վայոց ձորի լեռներ	- 2 - 5 + 9 + 11
Գեղարքունիք	0 - 5 + 6 + 11	Վայոց ձորի նախալեռներ	- 1 + 2 +17 + 19
Լոռի	- 1 - 5 +10 + 13	Սյունիքի հովիտներ	+ 3 + 7 +16 + 19
Տավուշ	- 2 + 3 +12 + 15	Սյունիքի նախալեռներ	0 - 2 + 9 + 12
Արագածոտնի լեռներ	0 - 3 + 7 + 11	ԼՂՀ	0 - 4 + 9 + 13
Արագածոտնի նախալեռներ	- 1 + 3 +11 + 15	Երեւան	+ 6 + 8 +16 + 18

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22^ա/3, հեռ՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03U089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 15.11.2024
Տպաքանակ՝ 3968

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՍԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրայնաչափում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը: «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: